ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿ ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՀ-ում գյուղատնտեսությունը ինչպես սոցիալ ժողովրդագրական առումով, այնպես էլ պարենային անվտանգության ապահովման և տնտեսական զարգացման տեսանկյունից հանդիսանում է որպես ազգային տնտեսության գերակա ճյուղերից, որի զարգացումը համեմատած այլ ոլորտների հետ առավել կախվածություն ունի զանազան ռիսկային գործոններից: Գյուղատնտեսությունում և հատկապես բուսաբուծության ճյուղում առավել արդյունքի հասնելուն հաճախ խոչընդոտում են բնական գործոնները՝ եղանակային պայմանների կտրուկ փոփոխությունները (ցրտահարություն, կարկտահարություն, երաշտ, ջրհեղեղ և այլն), տարաբնույթ վնասատուների և հիվանդությունների ի հայտ գալը:

Իրողությունները և վերլուծությունները վկայում են, որ նշված երևույթները Հայաստանի ագրոպարենային համակարգին հասցնում են հսկայական վնասներ և նույնիսկ անդառնալի կորուստներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնյաների տվյալներով բնակլիմայական գործոնով պայմանավորված՝ գյուղատնտեսության միջին հաշվով տարեկան վնասը կազմում է մոտ 20 մլրդ ՀՀ դրամ: Ցավոք որևէ պաշտոնական վիճակագրական տվյալ առկա չէ ՀՀ գյուղատնտեսությունում արձանագրված վնասների վերաբերյալ՝ ըստ ռիսկերի, ըստ մարզերի և ըստ գյուղատնտեսական արտադրանքի բաշխվածության կտրվածքով: Գյուղատնտեսական ռիսկերի հասցված վնասները վերականգնելու համար դեռևս միակ, լավագույն և արդյունավետ գործիք է հանդիսանում գյուղատնտեսության ապահովագրությունը:

Իհարկե գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ է ստեղծել կամ առավել կատարելագործել գյուղատնտեսությունը սպասարկող ենթակառուցվածքները:

Գյուղատնտեսությունում ռիսկերի մեղմման և ապահովագրության արդյունավետ համակարգի ներդրման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ **միջոցառումները**՝

- **Իրավական դաշտի կատարելագործում՝** ճյուղում ապահովագրական գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի մշակում և ներդրում, այդ թվում նաև ֆինանսական նորմատիվներին, ինչպես նաև պահուստներին ներկայացվող պահանջները,
- **գյուղատնտեսական կոոպերացիաների ստեղծում և զարգացում**, ինչը հնարավորություն կստեղծի մշակվող հողերի միավորման, ինչպես նաև չմշակվող հողերի մշակման համար՝ առավել արդյունավետ դարձնելով ապահովագրական համակարգի աշխատանքը
- **գյուղատնտեսության արդյունաբերականացում՝** արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի ներդրման միջոցով, մասնավորապես կարկտապաշտպան ցանցեր, կաթիլային ոռոգման համակարգեր, լիզինգային մատչելի ծրագրերով նոր սրաքավորումների ներգրավում և այլն,
- **գիտական, խորհրդատվական, ուսումնական և տեղեկատվական կենտրոնների ստեղծում և զարգացում**, ինչը հնարավորություն կտա ունենալու գյուղատնտեսության տարբեր ճյուղերի մասնագետներ, որոնց օգնությամբ և աջակցությամբ գյուղացիական տնտեսությունները հանարավորություն կունենան առաել մասնագիտացված և արդյունավետ եղանակներով կազմակերպել իրենց աշխատանքները,
- **Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում՝** ընդլայնելով վիճակագրական ցուցանիշների շրջանակը՝ հավաքագրելով նաև տեղի ունեցած պատահարների և կրած վնասների վերաբերյալ տվյալներ,
- **գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ էլեկտրոնային մշակված տվյալների բազայի ստեղծում՝** գյուղատնտեսության համատարած հաշվառման ծրագրի արդյունքներով:

Դեռևս 2018թ. նոյեմբեր ամսին ՀՀ ԿԲ կողմից ՀՀ ապահովագրական ընկերությունների քննարկմանն է ուղարկվել մի հայեցակարգ, որով առաջարկվում էր վերջիններիս մասնակցել ՀՀ գյուղապահովագրության գործակալության ձևավորմանը՝ Ավտոապահովագրողների բյուրոյի մոդելի նմանությամբ, որը հնարավորություն կտար վերջիններիս մասնակցել 2019թ.-2023թթ. ընկած ժամանակահատվածում իրականացվող ծրագրին:

Սույն քաղաքականության համառոտագիրը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինքի կողմից իրականացվող «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի շրջանակներումծրագրի շրջանակներում: Համառոտագրում տեղ գտած առաջարկություններըարտահայտում են Դաշինքի տեսակետը եւ կարող են չհամընկնել Եվրոպական միության դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Համառոտագրի հետ կապված հարցեր ունենալու դեպքում կարող եք կապվել՝

«Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի համակարգող՝

Վադիմ Ուզունյան
+374 91 221158
+374 93 718138
vuzunyan@oxygen.org.am